Մնացական Ա. Սաֆարյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԾՐՈՒՄ*

Բանալի բառեր – Չինաստանի արտաքին քաղաքականություն, Հարավային Կովկաս, Հայոց ցեղասպանություն, չին-թուրքական հարաբերություններ, մարդկության դեմ հանցագործություններ:

Մուտք

Վերջին տասնամյակների ընթացքում միջազգային հարաբերությունների համակարգում տեղի ունեցած նշանակալի զարգացումներից մեկը Ասիական-խաղաղօվկիանոսյան ողջ տարածաշրջանի (ԱԽՕՏ) և, հատկապես, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տնտեսական և քաղաքական կշռի ու դերակատարության բարձրացման իրողությունն է: Նշված փոփոխության ազդեցությունն այս կամ այն կերպ դրսևորվում է աշխարհի բոլոր անկյուններում, այդ թվում՝ Հարավային Կովկասում:

Հարավկովկասյան պետությունները Չինաստանի արտաքին քաղաքականության և դիվանագիտական ռազմավարության ուղեծրում հայտնվել են պատմական չափանիշներով ոչ հեռավոր անցյալում՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Ի տարբերություն չինական մշակութային ազեցության, Չինաստանի քաղաքական ազդեցությունը այդ երկրի բազմադարյա պատմության մեջ առաջին անգամ Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանից դուրս է տարածվել նույնպես վերջին մի քանի տասնամյակներում: Հետխորհրդային տարածքի եվրոպական մասի երկրներից շատերի հետ ՉԺՀ միջպետական և դիվանագիտական հարաբերությունները չունեն պատմական նախադեպեր և ձևավորվել են միայն նորագույն պատմության ժամանակահատվածում: Սա որոշ չափով վերաբերում է նաև Հարավային Կովկասի պետություններին:

Մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում Չինաստանի մոտեցումները Հայաստանի արտաքին քաղաքականության և անվտանգության կարևոր բաղադրիչներից մեկի՝ Հայոց ցեղասպանու-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 16.03.2015:

թյան փաստի հանդեպ, ինչպես նաև դրանց փոփոխման դինամիկան և հնարավոր հեռանկարները: Խնդրի հետազոտությունը կարևոր է այն տեսանկյունից, որ Հարավային Կովկասում Չինաստանի քաղաքականությունը դեռևս բավականաչափ ուսումնասիրված չէ: Ավելին՝ Հայաստանում նման աշխատանքների սակավությունը պատճառ է դառնում մեր երկրի և ընդհանրապես Հարավային Կովկասի հանդեպ ՉԺՀ արտաքինքաղաքական մոտեցումների միակողմանի մեկնաբանությունների և պարզաբանումների համար[1]:

Մինչդեռ վերջին ժամանակաշրջանում Չինաստանում հատկանշական զարգացումներ են տեղի ունեցել մարդկության դեմ հանցագործությունների պատմության ուսումնասիրության բնագավառում: Աճել է նման խնդիրների հանդեպ չինական հասարակության հետաքրքրությունը, փոփոխության են ենթարկվել ՉԺՀ իշխանությունների մոտեցումները մասնավորապես՝ Հրեական ողջակիզման և Նանկինի կոտորածի հարցի կապակցությամբ: Ջուգահեռաբար՝ Պեկինի տարածաշրջանային քաղաքականության ձևավորման արդյունքում փոխվել են նաև ՉԺՀ մոտեցումները Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ. աճել է ՉԺՀ գիտական և հասարակական շրջանների հետաքրքրությունը, մեծացել է հարցի կարևորությունը չինական դիվանագիտության համար: Մեր կարծիքով՝ **հեռանկարում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, Հարավային Կովկասում առկա այլ խնդիրների հետ մեկտեղ, կազմելու է տարածաշրջանի հանդեպ ՉԺՀ մոտեցումները ձևավորող խնդիրների շրջանակը**:

1. Չինական մամուլի և գիտական շրջանակների հետաքրքրության աճը

Հայոց ցեղասպանության հարցը Չինաստանի կենտրոնական լրատվամիջոցների ուշադրությունը գրավել է 2006-ին, երբ Ֆրանսիայի Ազգային ժողովն օրինագիծ ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման վերաբերյալ[2]: 2007 թ. սեպտեմբերին Չինաստանի «Հանրագիտարանային գիտելիք» պարբերականում հրապարակվեց **Սյու Փինգի** «Ցեղասպանություն. Հայոց եղեռնը» վերտառությամբ տեղեկատվական բնույթի հոդվածը[3]: Հայոց ցեղասպանության հարցին անդրադարձ է կատարել նաև **Յան Չինը** Հայաստանի և Թուրքիայի միջև սկիզբ առած «ֆուտբոլային դիվանագիտությանը» նվիրված հոդվածում[4]: Այսինքն՝

---

1 Ավելի մանրամասն տես **Սաֆարյան, Մ.**, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքականության ձևավորումը Հարավային Կովկասում ԽՍՀՄ փլուզումից հետո, «Մերձավոր Արևելք», հոդվածների ժողովածու IX-X, Եր., 2014, էջ 516-517:

2 Տես **ՃենգՖ.**, Թուրքիայի արտգործնախարարը համոզում է Ֆրանսիային դադարեցել Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի քննարկումը, «Սին Խուա» օրաթերթ, 2006թ. հոկտեմբեր (չինարեն):
(http://news.qq.com/a/20061018/001778.htm, ներբեռնվել է 2015թ. փետրվարին):

3 Հոդվածը տես (http://news.ifeng.com/history/shijieshi/detail_2010_03/05/360866_0.shtml, ներբեռնվել է 2015 թ. փետրվարին): Հայոց ցեղասպանության վերաբերյալ հանրագիտարանային բնույթի տեղեկատվություն է զետեղված նաև Չինաստանում ամենալայն տարածումն ունեցող «Բայդու» համացանցային որոնման կայքային շտեմարանում (http://baike.baidu.com/view/630798.htm, ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

4 Տես **Յանգ, Չ.**, Կլուծվի՞ հարցը ֆուտբոլային դիվանագիտությամբ, «Համաշխարհային գիտելիք», 2008, N19, Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի Ռուսաստանի, Արևելյան

Չինաստանի պարբերական մամուլում Հայոց ցեղասպանությանը վերաբերող հոդվածների թիվն աճել է 2006–2009 թթ.[5]:

Այս աշխատանքները նվիրված են Հայոց ցեղասպանության պատմության հիմնական փաստերի ներկայացմանը: Որոշ հեղինակներ կարծիք են հայտնում, որ Թուրքիան պետք առերեսվի իր պատմության հետ և պատասխանատվություն կրի: Խնդրի իրավական կողմին այս շրջանում անդրադարձներ չեն կատարվել:

Հատուկ Հայոց ցեղասպանության հարցին նվիրված առաջին գիտական ուսումնասիրությունները Չինաստանում լույս են տեսել 2010–2011 թվականներին: 2010 թ. Պեկինում լույս տեսած **Պաո Լիլի** «Հայոց ցեղասպանության հարցի վերլուծություն» աշխատության մեջ խնդիրը ներկայացվում է Հայոց պատմության, Օսմանյան կայսրության պատմության ու հայ-թուրքական հարաբերությունների ենթատեքստում[6]: Հատկանշական է, որ Չինաստանի համար Հայոց ցեղասպանության հարցի և հայ-թուրքական հարաբերությունների ուսումնասիրության կարևորությունը հեղինակը հիմնավորում է՝ վկայակոչելով Չինաստանի արևմտյան Սինձյան-Ույղուրական ինքնավար շրջանում (ՍՈՒԻՇ) ույղուրական անջատողականության ակտիվացումը, ինչպես նաև Թուրքիայի որոշ քաղաքական շրջանակներում կովկասյան և կենտրոնասիական տարածաշրջանների, այդ թվում՝ ՍՈՒԻՇ-ի նկատմամբ պանթուրքիստական մոտեցումների և տրամադրվածության առկայությունը: Պաո Լիլին նշում է, որ այս խնդիրները Կենտրոնական Ասիայում և Միջին Արևելքում ՉԺՀ կողմից իրականացվող քաղաքականության և անվտանգության կարևոր տարրն են կազմում[7]:

2011 թ. Սիանում լույս տեսած **Շի Յանգի** «1915–1917 թթ. Հայոց ցեղասպանության և դրա ազդեցության վերլուծություն» աշխատանքում հեղինակը հետազոտել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ չինալեզու գրականությունը՝ եզրակացնելով, որ այն փոքրաթիվ է, իսկ նախկինում խնդրին հիմնականում մակերեսային անդրադարձներ են կատարվել այլ պատմական հարցերին, օրինակ՝ Օսմանյան կայսրության պատմությանը և Հայկական հարցին նվիրված աշխատանքներում[8]: Ցեղա-

---

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետազոտությունների ինստիտուտ (http://euroasia.cass.cn/news/143432.htm, ներբեռնվել է 2015թ. փետրվարին):

5 Տես **Խոու Յ.**, Հայոց Մեծ Եղեռնի պատմությունը, «Չինաստանի պաշտպանական նորությունների օրաթերթ», Պեկին, 2009թ. հոկտեմբեր, N 20 ((չինարեն, հասանելի է Չինաստանի գիտական գրականության www.cnki.net շտեմարանի միջոցով), **Պաո Լ.**, Հայոց Մեծ Եղեռնի պատասխանատվությունը, «Համաշխարհային գիտելիք», Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետազոտությունների ինստիտուտ, Պեկին, 2010, N 9, (չինարեն) (http://euroasia.cass.cn/news/161607.htm, ներբեռնվել է 2015թ. փետրվարին), **Յանգ Յ.**, Ճշմարտությունը 20-րդ դարի երեք մեծ ցեղասպանություններից մեկի՝ Հայոց Մեծ եղեռնի մասին, 2010թ. օգոստոս (չինարեն) (http://www.people.com.cn/GB/198221/198819/198850/12408428.html, ներբեռնվել է 2015թ. փետրվարին):

6 Տես **Պաո Լ.**, Հայոց ցեղասպանության հարցի վերլուծություն, մագիստրոսական ատենախոսություն, 2010 թ. մայիս, Պեկին, Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի բարձրագույն դպրոց (Պաո Լիլի, Յա Մեյ Նի Յա Տաթուշա Վընթի Ֆընսի, Շուոշի Սյուեվեյ Լունվեն, 2010 Նիեն 5 Յուե, Պեյձինգ, Ճոնգգուո Շիխույ Քրսյուեյուան Յանձիուշրնգյուան, 包丽丽，亚美尼亚大屠杀问题分析，硕士学位论文 2010年5月，北京，中国社会科学院研究生院) (հասանելի է Չինաստանի գիտական գրականության www.cnki.net շտեմարանի միջոցով):

7 Նույն տեղում, էջեր 32–33:

8 Տես **Շի Յ.**, Հայոց ցեղասպանության և դրա ազդեցության վերլուծություն, մագիստրոսական ատենախոսություն 2011 թ., Սիան, Հյուսիսարևմտյան համալսարան (Շի Յանգ, Շիսի 1915–1917 Յամենսիյա Տաթուշա Զիցի Յինգսիանգ, 2001 Նիեն, Սիան Սիբեյ Տայուե, 失样，试析1915–1917 亚美尼亚大屠杀及其影响，硕士学位论文，2011年，西安，西北大学) (հասանելի է Չինաստանի գիտական գրականության www.cnki.net շտեմարանի միջոցով):

սպանության պատճառների շարքում նշվում են օսմանյան Թուրքիայի կառավարության ցեղասպանական, ռասիստական քաղաքականությունը, վախը Թուրքիայի հայերի անկախանալու ձգտման հանդեպ, ինչպես նաև մեծ տերությունների ազդեցությամբ պայմանավորված գործոնները: Հեղինակն ուսումնասիրել է Հայոց ցեղասպանության հարցի ազդեցությունը արդի հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում, ինչպես նաև նրա դերը թուրք-ամերիկյան և Թուրքիա-ԵՄ հարաբերությունների մեջ: Հայ-թուրքական հարաբերությունների հանգուցալուծումը Շի Յանգը կապում է Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի գործունեության շարունակման հետ՝ նշելով, որ Թուրքիան ամեն դեպքում պետք է փոխատուցում վճարի հայերին: Հատկանշական է Շի Յանգի կողմից կատարված **ճոնգձումիեձյուե՝** ցեղասպանություն (种族灭绝) և **Տաթուշա՝** կոտորած (大屠杀) եզրերի վերլուծությունը, քանի որ Չինաստանում Հայոց ցեղասպանության մասին գրականության մեջ հաճախ են հանդիպում թե՛ մեկը և թե՛ մյուսը[9]: Հեղինակը, վերլուծելով այս եզրերի առկա իրավական սահմանումները, եզրակացնում է, որ 1915–1917 թթ. հայերի կոտորածները Թուրքիայում պետք է անվանել Հայոց ցեղասպանություն (亚美尼亚种族灭绝 *Յամեինիյա ճոնգձումիեձյուե*)[10]: Աշխատանքում զուգահեռներ են անցկացվում Հայոց Մեծ եղեռնի և Հոլոքոստի միջև, կատարվում է դրանց համեմատությունը: Չինարեն լեզվով կատարված աշխատանքների շարքում հարկ է նշել նաև **Վահե Ղազարյանի** «Հայոց ցեղասպանության իրավական պատասխանատվությունը» աշխատանքը, որը լույս է տեսել 2014 թ. Չիլինի համալսարանում:

Այսպիսով, 2006–2009 թթ. Չինաստանի կենտրոնական մամուլը սկսել է ավելի շատ ուշադրություն դարձնել Հայոց ցեղասպանության հարցի հետ կապված իրադարձությունների լուսաբանմանը: Իսկ 2009–2011 թթ. աճել է նաև Չինաստանի գիտական շրջանակների հետաքրքրությունը, և հրապարակվել են Հայոց ցեղասպանության մասին ուշագրավ գիտական վերլուծություններ:

2. Չինաստանի միջազգային դերակատարության աճը և Հայոց ցեղասպանության հարցը

ՉԺՀ դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ պայմանավորվում է մի շարք գործոններով, որոնց թվում պետք է առանձնացնել միջազգային հարաբերությունների համակարգում Չինաստանի դերակատարության աճը, նրա արտաքին քաղաքականության ապագաղափարականացումը, ինչպես նաև աշխարհի առանձին տարածաշրջանների նկատմամբ այդ երկրի հետաքրքրության մեծացումը և տարածաշրջանային քաղաքականության ձևավորումը:

Փորձենք պարզաբանել, թե ինչպես է այս գործոնների միահյուսման արդյունքում Հայոց ցեղասպանության հարցը հայտնվել ՉԺՀ

9 Չինարենից հայերեն հնչյունադարձումը կատարվել է՝ օգտագործելով Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի համար Կոնֆուցիուսի ինստիտուտի կողմից կազմված չինարենի ինիցիալների և ֆինալների համադրման աղյուսակը (http://confucius.brusov.am/media/pages/10/table_final.pdf):

10 Տես նույն տեղում, էջ 53–54:

արտաքին քաղաքականության ուղեծրում, և ներկայումս ինչպիսի մոտեցումներ են ձևավորվում ՉԺՀ-ում այդ հարցի վերաբերյալ:

XX դարի երկրորդ կեսին ՉԺՀ արտաքին քաղաքականության և դիվանագիտության հայեցակարգը կրել է մի քանի հատկանշական փոփոխություններ: Այն ձևավորվել է հաջորդական հանգրվաններով, սկսած՝ Մաո Զեդոնգի և Ճոու Էնլայի կողմից առաջադրված 1950-ականների «ձախակողմյան կողմնորոշման» և 1960-ականների «չմիավորման շարժմանը հարելու» քաղաքականությունից մինչև Դենգ Սիաոփինգի «բաց դռների» քաղաքականությունը, որի ընթացքում Չինաստանը արտաքին աշխարհից գրեթե մեկուսացված վիճակից աստիճանաբար ինտեգրվեց համաշխարհային տնտեսական և քաղաքական հարաբերությունների համակարգին: 1989 թ. հունիսին տեղի ունեցած Թիենանմենի դեպքերից հետո, երբ վատթարացան ՉԺՀ-ԱՄՆ հարաբերությունները, Դենգ Սիաոփինգը հանդես եկավ ՉԺՀ արտաքին քաղաքականության վերաբերյալ ծրագրային ելույթով, որտեղ նշեց, որ մոտակա տարիների ընթացքում Չինաստանի քաղաքականությունը պետք է զգուշավոր բնույթ կրի[11]: Այս հայեցակարգային մոտեցումը հետագայում կոչվեց «փոքր գործերի քաղաքականություն»:

2006-2010 թթ. Արևմուտքի գիտական շրջանակներում քննարկում ծավալվեց ՉԺՀ արտաքին ռազմավարության և կեցվածքի փոփոխության վերաբերյալ, որը հաճախ բնութագրվում էր «ինքնահաստատող» (assertive) եզրով: Պետք է նշել, որ պաշտոնական Պեկինի կողմից այս գնահատականը հակադարձվում է «Չինաստանի խաղաղ վերելքի» հայեցակարգի ակտիվ տարածմամբ[12]:

Անկախ նրանից, թե ինչպես են բնութագրում ՉԺՀ վարքագիծը արտաքին հարաբերություններում, մի շարք առաջատար գիտնականներ այսօր նշում են, որ Չինաստանի առջև կանգնած է հստակ խնդիր՝ որոշել իր ճշգրիտ տեղն ու դերը միջազգային հարաբերությունների համակարգում[13]: ՉԺՀ կարգավիճակի փոփոխության արտացոլումն է հանդիսանում նրա դերակատարության աճը ՄԱԿ-ում և մի շարք այլ միջազգային կազմակերպություններում: Չինաստանի միջազգային դերակատարության աճին զուգահեռ ավելանում է նաև ՉԺՀ քաղաքական և դիվանագիտական ազդեցությունը աշխարհի ուժային կենտրոնների շահերի բախման հանգույցներում ու մանավանդ՝ թեժ կետերում առկա հակամարտությունների և տարաձայնությունների կարգավորման հարցերում:

ՉԺՀ դերակատարության աճին զուգահեռ հատկանշական փոփոխություններ են կրել ՉԺՀ արտաքին քաղաքական մոտեցումները: Որոշ գիտ-

11 Տես **Pei M.**, Assertive Pragmatizm: China's Economic Rise and Its Impact on Chinese Foreign Policy, Prolifiration Papers, IFRI, Paris, 2006. p. 13.

12 Չինաստանի արտաքին քաղաքական հայեցակարգի էվոլուցիոն փոփոխության վերաբերյալ տես **Zhao S.**, China's Foreign Policy as A Rising Power to Find its Right Place, Perceptions, Ankara, Spring 2013, Volume XVIII, Number 1, pp.101-128, **Zhang B.**, China's Foreign policy in Transition, Journal of Current Chinese Affairs, Hamburg, 2/2010, pp. 39-68, **Medeiors E.**, China's International Bahaviour, Rand, 2009, (http://www.rand.org/content/dam/rand/pubs/monographs/2009/RAND_MG850.pdf, (ներբեռնվել է 2015թ. փետրվարին):

13 Այս իրողությունն արտահայտվեց 2011-2012 թթ. ԱՄՆ և ՉԺՀ գիտական շրջանակների միջև աշխարհում ՉԺՀ ապագա դերակատարության շուրջ սկսված քննարկման ընթացքում, երբ Չինաստանին ԱՄՆ կողմից առաջարկվեցին «պատասխանատու բաժնետիրոջ» և «G2» ձևաչափերը, ընդ որում՝ երկուսն էլ մերժվեցին ՉԺՀ իշխանությունների, ինչպես նաև գիտական շրջանակների կողմից: Տես **Zhao S.**, նույն տեղում, էջ 101:

նականներ սա անվանում են ՉԺՀ արտաքին քաղաքականության **ազգայնացում**[14], իսկ ոմանք՝ **ապագաղափարականացում**[15]: Այս հանգամանքը կարևոր է հասկանալու համար, թե ինչպիսի արտաքին-քաղաքական և գաղափարական-հայեցակարգային մոտեցումներ են ձևավորում Չինաստանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում:

Քննության առնելով մարդկության դեմ հանցագործությունների հանդեպ Չինաստանի մոտեցումները, բնականաբար, պետք է անդրադառնալ 1937 թ. Նանձինգի կոտորածի վերաբերյալ ՉԺՀ դիրքորոշմանը: 2014 թ. փետրվարին Չինաստանի բարձրագույն օրենսդրական մարմինը՝ ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովը (ԺՆՀԺ), դեկտեմբերի 13-ը սահմանեց Նանձինգի կոտորածի զոհերի ազգային հիշատակի օր[16]: 2014 թ. ընթացքում Նանձինգի կոտորածի վերաբերյալ տեղեկատվությունը ներառվեց Չինաստանի պատմության դպրոցական ծրագրերում[17], իսկ 2014 թ. դեկտեմբերին ՉԺՀ Նախագահ Սի Չինփինգը ներկա գտնվեց առաջին անգամ պետական մակարդակով նշված հիշատակի արարողությանը, որը տեղի ունեցավ 1985 թ. Նանձինգում կառուցված հուշահամալիրում[18]:

Հարց է ծագում. ինչու՞ է Նանձինգի հուշահամալիրը կառուցվել միայն 1985-ին, իսկ զոհերի հիշատակի արարողությունը պետական մակարդակով կազմակերպվել է՛լ ավելի ուշ՝ 2014 թվականին: Այս հարցին նվիրված իր հոդվածում **Իսաակ Սթոուն Ֆիշը** նշում է, որ Չինաստանի Կոմունիստական կուսակցությունը 1950-ականներին և 1960-ականներին, առաջնորդվելով մարքսիստական գաղափարախոսությամբ, հրաժարվել էր անդրադառնալ և գնահատական տալ 1937-ին Նանձինգում տեղի ունեցած իրադարձություններին[19]: Սակայն Մաո Զեդոնգի մահվանից վեց տարի անց՝ 1982-ին Ճապոնիայի կրթության նախարարությունը հրատարակեց դպրոցական դասագրքեր, որտեղ փորձ էր կատարվել նվազեցնել Ճապոնիայի բացասական դերը Երկրորդ համաշխարհային պատերազմում: Ի պատասխան դրա՝ 1982 թ. Նանձինգում սկսեց կառուցվել կոտորածի զոհերի հուշահամալիր, որը բացվեց 1985-ին: Դրան զուգահեռ՝ խնդիրը սկսեց ակտիվ ուսումնասիրվել չինացի գիտնականների կողմից, և այժմ արդեն միայն Չինաստանում լույս են տեսել Նանձինգի

14 Տես **Chen Z.**, Nationalism, Internationalism and Chinese Foreign Policy, Journal of Contemporary China, 2005, Online, p. 43, (http://www.tandfonline.com/loi/cjcc20#.VOEpnyz2T_s, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

15 Տես **Fang, L.**, Is China's Foreign Policy Becoming Less Ideological, October 2003, University of Durnham, (https://www.dur.ac.uk/resources/china.studies/Is_Chinas_Foreign_Policy_Becoming_Less_Ideological.pdf, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

16 Տես **Xiang B.**, President Xi attends China's first state memorial ceremony for Nanjing Massacre victims, Xinhuanet, December 2014, (http://news.xinhuanet.com/english/china/2014-12/13/c_133851995.htm, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

17 Տես China adopts textbooks on Nanjing Massacre ahead of memorial day, China Daily, November 2014, (http://usa.chinadaily.com.cn/china/2014-11/13/content_18911066.htm, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին)%

18 Տես The memorial hall of victims in Nanjing messacre by Japanese invaders (http://www.nj1937.org/en/2014-08/23/c_133577657.htm, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

19 Պատճառն այն էր, որ երբ ճապոնական զորքերը գրավեցին Նանձինգը, այն Չինաստանի Կոմունիստական կուսակցության (ՉԿԿ) գաղափարական հակառակորդ պահպանողական «Գուոմինդանգ» կուսակցության կառավարության կենտրոնն էր և հետևաբար գտնվում էր վերջինիս պատասխանատվության ներքո: Տես **Stone Fish I.**, Why did China downplay the Nanjing massacre?, Foreign Policy Magazine, February 23, 2012, (http://foreignpolicy.com/2012/02/23/why-did-china-downplay-the-nanjing-massacre/, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

կոտորածին նվիրված բազմաթիվ գիտական աշխատություններ: Նանձինգի կոտորածին ՉԺՀ իշխանությունների վերաբերմունքն արտացոլում է ՉԺՀ արտաքին քաղաքականության ապագաղափարականացման (ըստ որոշ հեղինակների՝ ազգայնացման) գործընթացը, որը սկսվել է դեռևս Դենգ Սյաոփինգի կողմից ՉԺՀ ղեկավարությունը ստանձնելու ժամանակ:

Չինաստանը մեծ նշանակություն է տալիս միջազգային կազմակերպությունների դերակատարությանը՝ միջազգային հարաբերություններում[20]: Այս կազմակերպություններից շատերի օրակարգը ներառում է մարդկության դեմ հանցագործությունների դատապարտման և կանխարգելման խնդիրները: Այսպես օրինակ՝ 2014-ին Չինաստանը դիմել է ՅՈՒՆԵՍԿՈ-ին Նանձինգի կոտորածից հետո տեղի կանանց դեմ իրականացված հանցագործությունների փաստաթղթերը կազմակերպության պահոցում գրանցելու հայտով[21]: Այսինքն՝ կարելի է փաստել, որ Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգը 2014-ին անցել է ապագաղափարականացման ևս մեկ փուլ, ինչը կապված է վերջին տարիներին Ճապոնիայի հետ հարաբերություններում տեղի ունեցող բացասական գործընթացների հետ:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում ՉԺՀ-ում զարգացում է ապրել մարդկության դեմ հանցագործությունների և հատկապես Հոլոքոստի հետազոտությունը, որը տեղի է ունեցել Նանձինգի կոտորածի ուսումնասիրության աճին զուգահեռ[22]: 1995 թ. ՉԺՀ-ում լույս են տեսել Հոլոքոստին նվիրված առաջին ծավալուն աշխատությունները: Բոլորովին վերջերս հրապարակված «Հոլոքոստի վերաբերյալ կրթության հետ կապված միջազգային իրավիճակը» ուսումնասիրության մեջ նշվում է, որ ՉԺՀ-ում ներկայումս օգտագործվող պատմության դասագրքերը բնութագրվում են «Երկրորդ համաշխարհային պատերազմի համատեքստում ֆաշիստական ռեժիմի կողմից իրականացված ցեղասպանության տեսականացված մոտեցմամբ... և 1937 թ. ճապոնական զինված ուժերի կողմից Նանկինի խաղաղ բնակչության կոտորածի հետ անցկացվող զուգահեռներով»: Նշվում է նաև, որ չինական դասագրքերում «ցեղասպանություն» բառի չինարեն համարժեքը **ճոնգճու միեձյուե** (种族灭绝) եզրն է [23]:

Այսպիսով՝ Չինաստանի դերակատարության աճն աշխարհում հանգեցրել է նրա արտաքին քաղաքականության ապագաղափարականաց-

20 Տես **Tieh S.**, China in the UN: United with Other Nations?", Stanford Journal of East Asian Affairs, Volume 4, Number 1, Winter 2004, p. 28.

21 China applies for UNESCO listing of Nanjing documents, Xinhuanet, December 6, 2014, (http://news.xinhuanet.com/english/china/2014-06/12/c_133400417.htm, ներբեռնվել է 2015թ. փետրվարին):

22 Սյու Սինը նշում է, որ 1950-ական թվականների սկզբին, երբ Կոմունիստական կուսակցությունն իշխանության եկավ Չինաստանում, ՉԿԿ-ն հետևում էր ԽՍՀՄ-ի այն մոտեցմանը, որ հրեաների սպանությունները մասն էին Եվրոպայի քաղաքացիական բնակչության դեմ ֆաշիստների կողմից իրականացված զանգվածային ռասայական սպանդի: ՉԿԿ-ի գաղափարախոսություն մեջ ֆաշիզմը համարվում էր կապիտալիզմի ծայրահեղ տեսակ, իսկ Հոլոքոստի պատճառները դիտարկվում էին կապիտալիզմի բնույթի հիմքերում: Այս մոտեցումների շրջանակներում հրեաների ողջակիզումը որևէ հատուկ տարբերություն չուներ մնացյալ զանգվածային սպանություններից: Տես **Xu X.**, Holocaust Eduction in China, The Holocaust and the United Nations Outreach Programme, Discussion Papers Journal, United Nations, New York, 2009 (http://www.un.org/en/holocaustremembrance/), էջ 11-17:

23Տես **Carrier P., Fuchs E., Messinger T.**, The International Status of Education about the Holocaust, A Global Mapping of Textbooks and Curricula, United Nations Educational, Scientific and Cultural Organization (UNESCO), Paris and the Georg Eckert Institute for International Textbook Research, Braunschweig, 2015, p. 09-91.

մանը, որի արդյունքում Չինաստանում աճել է հետաքրքրությունը մարդկության դեմ հանցագործությունների, հատկապես՝ Հոլոքոստի և Նանձինգի կոտորածի պատմության նկատմամբ: Նման զարգացումները նպաստում են Հայոց ցեղասպանության փաստի հանդեպ հետաքրքրության աճին:

3. Հայոց ցեղասպանության խնդիրը Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ

Հայոց ցեղասպանության փաստի նկատմամբ ՉԺՀ դիրքորոշման վրա ազդող կարևորագույն գործոնը ՉԺՀ տարածաշրջանային քաղաքականությունն է: Վերջին տասնամյակների ընթացքում Չինաստանը փորձում է ձևավորել գլոբալ և տարածաշրջանային ռազմավարություն կամ ավելի ճիշտ՝ տարածաշրջանային ռազմավարություններ: Այսպես, ՉԺՀ տարածաշրջանային քաղաքականությունն ունի մի քանի մակարդակ. հարևան երկրներ, մեծ տերություններ, զարգացող երկրներ, որոնք իրականացվող քաղաքականության տեսանկյունից միավորվում են տարածաշրջանային սկզբունքով՝ որոշակի աշխարհատնտեսական և այլ գործոնների հիմքերի վրա: Նման տարածաշրջանային խմբավորումներից մեկն է Հարավային Կովկասը, որը, հարևան լինելով Կենտրոնական Ասիայի և Կասպիական տարածաշրջաններին, կարևոր է Չինաստանի երկարաժամկետ տնտեսական զարգացման և անվտանգության համար[24]:

Տարածաշրջանային քաղաքականության համատեքստում Չինաստանի համար մեծ կարևորություն ունեն հարաբերությունները Թուրքիայի հետ: Վերջին տարիներին չին-թուրքական հարաբերությունների խորացումը տարածվել է նաև ռազմական ոլորտի վրա: Օրինակ՝ Թուրքիայում քննարկվում է Չինաստանից զենիթահրթիռային համակարգերի ձեռքբերման հարցը: Ինչպես նշվում է «Ժենմին Ժիբաոյի» հոդվածում՝ «Թուրքիան որպես տարածաշրջանային տերություն, չնայած ՆԱՏՕ-ում իր անդամի կարգավիճակի պահպանմանը և ԵՄ հետ համաձայնագրի ստորագրմանը, վարում է չափազանց անկախ պաշտպանական քաղաքականություն»[25]: Թուրքիայի դերը Չինաստանի «Մետաքսի ճանապարհ» ծրագրի իրականացման մեջ վերլուծության է ենթարկվել Քրիստինա Լին-ի «Չինաստանի ռազմավարական տեղաշարժը դեպի չորս ծովերի տարածաշրջան» աշխատության մեջ[26]: Արևմտյան որոշ վերլուծականներում նշվել է, որ Թուրքիայի և Չինաստանի միջև նման գործարքի վրա ազդեցություն ունի Հայոց ցեղասպանության խնդրի կապակցությամբ ԱՄՆ դիրքորոշումը[27]: Այս առումով կարևոր է բացահայտել Չինաստանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ, ՉԺՀ-ի՝ Թուր-

24 Տես **Oliker, O.**, Conflict in Central Asia and the South Caucasus: Implications of Foreign Interests and Involvement", RAND Arroyo Center, 2003, p. 240.

25 Տես Турция приобрела китайский ЗРК «HQ-9», несмотря на противодействие со стороны США, «Женьминь Жибао», февраль 2015 (http://russian.people.com.cn/n/2015/0227/c31521-8854831.html, (ներբռնվել է 2015թ. փետրվարին).

26 Տես **Lin C.**, China's strategic shift towards the region of the four seas: the Middle Kingdom arrives in the Middle East, Middle East review of International Affairs, Vol. 17, No. 1, Spring 2013, (http://www.rubincenter.org/wp-content/uploads/2013/03/Lin-YA-au1-PDF.pdf, (ներբռնվել է 2015 թ. փետրվարին).

27 Տես **Kuchera J.**, Turkey linking Major Arms purchase to Armenian Genocide recognition, Eurasianet.org, February 2015, (http://www.eurasianet.org/node/72161, (ներբեռնվել է 2015թ. փետրվարին).

քիայի հետ ռազմավարական գործընկերության հարաբերությունների համատեքստում, որի մասին երկու պետությունները հայտարարեցին 2010 թ. ընթացքում: Հարցը կարևորվում է նաև այն տեսանկյունից, որ Չինաստանը բարեկամական սերտ հարաբերություններ է պահպանում Հարավային Կովկասի պետությունների, այդ թվում նաև՝ Հայաստանի հետ:

1992–2009 թթ. ժամանակահատվածում Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ Չինաստանի պաշտոնապես ձևակերպված դիրքորոշման վերաբերյալ փաստեր չեն հայտնաբերվել: Միակ ուշարժան իրադարձությունը 1997 թ. հունիսին տեղի ունեցած ՉԺՀ խորհրդարանական պատվիրակության այցն է Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության հուշահամալիր, որը, սակայն, լայնորեն չի լուսաբանվել: Հայոց ցեղասպանության հարցը չի արտացոլվել նաև մինչ այժմ ՀՀ և ՉԺՀ միջև ստորագրված որևէ երկկողմ իրավապայմանագրային փաստաթղթում: Դիվանագիտական շփումների ընթացքում չինական կողմը Հայոց ցեղասպանության կապակցությամբ ՉԺՀ դիրքորոշմանը վերաբերող հարցադրումներին տվել է ընդհանրացված պատասխաններ և մեկնաբանություններ՝ հիմնականում սահմանափակվելով տեղի ունեցածի վերաբերյալ ճշգրտումներով և հետաքրքրության դրսևորումներով[28]:

Այս ընթացքում Չինաստանը ներկայացրել է նաև իր դիրքորոշումը Հարավային Կովկասի տարբեր խնդիրների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության, վրաց-աբխազական, վրաց-օսական հակամարտությունների, ինչպես նաև 2008 թ. օգոստոսի ռուս-վրացական ռազմաբախման կապակցությամբ: Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցը քննարկվել է նաև 1995 թ. Սուլեյման Դեմիրելի Չինաստան այցի ընթացքում կայացած չին-թուրքական բարձրաստիճան հանդիպումներում[29]: Սակայն այս ժամանակահատվածում թուրք-չինական պաշտոնական շփումների ընթացքում Հայոց ցեղասպանության հարցին անդրադարձների փաստեր չկան: Թերևս խնդիրն այս շրջանում չի արծարծվել կամ արծարծվել է ոչ հրապարակավ:

Մինչդեռ, ինչպես նշում են մի շարք վերլուծաբաններ, 1990-ականների երկրորդ կեսին ույղուրական խնդրի պատճառով հարաբերությունները Չինաստանի և Թուրքիայի միջև լարված բնույթ էին ստացել[30]: Սակայն այս շրջանում Չինաստանը չի արծարծել Հայոց ցեղասպանության հարցը՝ Թուրքիայի հանդեպ ճնշում գործադրելու կամ Հայաստանի հետ հարաբերություններն առավել խորացնելու համար:

Չինաստանի մոտեցումները Հայոց ցեղասպանության հարցին սկսել են ձևավորվել որպես ռեակցիա Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի 2009 թ. հայտարարությանը: Սկզբում՝ Ուրումչիում 2009 թ.

---

28 Այդ են վկայում ՀՀ և ՉԺՀ միջև հարաբերությունների վերաբերյալ ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժնի նյութերի և ԱԳՆ ընթացիկ գործավարության փաստաթղթերի ուսումնասիրությունը, ինչպես նաև չինացի դիվանագետների հետ հեղինակի անձնական շփումների ընթացքում ստացած տպավորությունները:

29 Տես Colakoglu, S., Turkey-China relations: rising partnership, Ortadogu Analiz – Middle East Analisys, April 2013, Volume 5, Number 52, p. 35,
(http://www.orsam.org.tr/en/enUploads/Article/Files/2013415_3selcukcolakoglu.pdf, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին).

30 Տես **Shichor Y.**, Ethno diplomacy: The Uygur hitch in in Sino-Turkish relations, East-West center, Policy studies 53, 2009, p. 30-35.

հուլիսին տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որում նշվում էր. «Մենք ակնկալում ենք, որ այն անձինք, որոնք պատասխանատու են այս իրադարձությունների համար, կհայտնաբերվեն որքան հնարավոր է արագ և կենթարկվեն պատասխանատվության: Մենք կարծում ենք, որ անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն նման միջադեպերը կանխելու ուղղությամբ Չինաստանում՝ մի երկրում, որը բռնել է կայուն և բարգավաճ դառնալու ճանապարհը»[31]: Այնուհետև, 2009 թ. հուլիսին մի շարք թուրքական ԶԼՄ-ներ հաղորդագրություններ տարածեցին, որտեղ նշվում էր, որ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը կարծիք է հայտնել, որ «Չինաստանում տեղի ունեցած իրադարձությունները կարծես ցեղասպանություն լինեն»[32]: Չինաստանը պահանջեց հետ վերցնել Թուրքիայի վարչապետի այս մեղադրանքը[33] և կտրուկ դեմ արտահայտվեց ՄԱԿ-ում խնդրի քննարկում անցկացնելու Թուրքիայի առաջարկին[34]: Հարկ է նշել նաև, որ Թուրքիայի վարչապետի մեղադրանքները հասարակական բողոքի ալիք բարձրացրին Չինաստանում [35]: Ուստի Չինաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների միջև տեղի ունեցած հեռախոսազրույցի ընթացքում Թուրքիայի ԱԳ նախարարը նշեց, որ «Թուրքիան նպատակ չուներ միջամտելու Չինաստանի ներքին գործերին»[36]:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ վարչապետ Էրդողանի վերը բերված խոսքերը Սինձյանում տեղի ունեցած դեպքերի մասին գրավել են նաև աշխարհասփյուռ հայության ուշադրությունը: Միացյալ Նահանգների հայկական «Ասպարեզ» օրաթերթում կարծիք է հնչեցվել, որ «Էրդողանի անհավասարակշիռ մեղադրանքներին Չինաստանի ամենաարդյունավետ պատասխան քայլը կարող է լինել Չինաստանի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագծի ընդունումը»[37]:

Աշխարհի տարբեր պետություններում ձևավորված հայ համայնքային կառույցները կարևոր դեր ունեն տվյալ պետության հասարակայնությանը Հայոց ցեղասպանության փաստի վերաբերյալ տեղեկացնելու և դրա

---

31 Press Release Regarding the Incidents that Took Place in Urumqi, the Capital City of Xinjiang Uyghur Autonomous Region, No:115, 06 July 2009, Ministry of Foreign Affairs, Republic of Turkey. (http://www.mfa.gov.tr/no_115_-06-july-2009_-press-release-regarding-the-incidents-in-urumqi_-the-capital-city-of-xinjiang-uyghur-autonomous-region.en.mfa, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին).

32 Turkish leader calls Xinjiang killings genocide, Reuters, July 2010, (http://www.reuters.com/article/2009/07/10/us-turkey-china-sb-idUSTRE56957D20090710, (ներբեռնվել է 2015թ. փետրվարին)), Turkish PM: incidents in Xinjiang are like genocide, Turkish weekly, July 2009, (http://www.turkish-weekly.net/news/83957/turkish-pm-erdogan-39-incide, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

33 Տե՛ս Turkey's Prime Minister remarks anger China, People's Daily Online, July 2009) (http://news.xinhuanet.com/english/2009-07/09/content_11681745.htm, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

34 Տե՛ս China opposes Turkey's call for UN talks on Xinjiang, People's Daily, July 2009 (http://news.xinhuanet.com/english/2009-07/09/content_11681745.htm, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

35 Տե՛ս Public angered by Turkish PM's 'genocide' accusation, People's Daily Online, July 2009, http://en.people.cn/90001/90776/90882/6699942.html, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին): Chinese netizens call for punishing Turkey, People's Daily Online, July 2009, http://en.people.cn/90001/90776/90883/6700422.html, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

36 Chinese, Turkish FMs hold phone talks on ties, Urumqi riots, Xinhua, July 2015 (http://news.xinhuanet.com/english/2009-07/14/content_11703528.htm, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

37 **Sassounian H.**, China Should Retaliate Against Turkey By Recognizing the Armenian Genocide, Asbarez Armenian News, July 24, 2009: http://asbarez.com/68556/china-should-retaliate-against-turkey-by-recognizing-the-armenian-genocide, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

շուրջ քննարկումներ ծավալելու գործում: Այս առումով պետք է արձանագրել, որ Չինաստանի **Պեկին**, **Շանհայ**, **Հոնգկոնգ**, **Շընձընգ**, **Գուանչժոու** քաղաքներում մեր օրերում ստեղծվել են փոքրաթիվ հայկական համայնքներ, սակայն դրանց հասարակական գործունեության միջոցներն ու հնարավորությունները դեռևս ձևավորման փուլում են[38]:

Ինչպես արդեն նշվել է, այս դեպքերին հաջորդած տարիների ընթացքում՝ 2009–20011 թթ., Հայոց ցեղասպանության հարցը դարձել է Չինաստանի գիտական շրջանակների ուսումնասիրության առարկան: Բացի այդ աճել է Չինաստանի կենտրոնական մամուլում Հայոց ցեղասպանությանը և հայ-թուրքական հարբերություններին առնչվող հաղորդագրությունների թիվը, ինչպես նաև դրանցում «ցեղասպանություն» եզրի կիրառումը[39]:

Ավելին՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ Չինաստանի մոտեցումը նոր որակ է ձեռք բերել 2011 թ. փետրվարին, երբ պաշտոնական այցով գտնվելով Հայաստանում՝ Չինաստանի արտաքին գործերի նախարար Ցանգ Ձիեչին այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին[40]: ՉԺՀ ԱԳ նախարարի այս քայլի կապակցությամբ «Անադոլու» գործակալության հարցմանն ի պատասխան՝ Չինաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ Չինաստանը տեղյակ է Թուրքիայի և Հայաստանի միջև պատմական խնդիրների բարդությանը և ցանկանում է, որ դրանք լուծվեն երկխոսության միջոցով[41]:

Եզրակացություններ

Չինաստանի դերակատարության աճն աշխարհում հանգեցրել է նրա արտաքին քաղաքականության ապագաղափարականացմանը, որի արդյունքում Չինաստանում աճել է հետաքրքրությունը մարդկության դեմ հանցագործությունների, հատկապես՝ Հոլոքոստի և Նանձինգի կոտորածի ուսումնասիրության նկատմամբ: Վերջին տարիներին ձևավորվող խոշոր տերության՝ ՉԺՀ դիվանագիտությունն ընդլայնել է իր արտաքին քաղաքականության ուղեծիրը, ինչի արդյունքում Հայոց ցեղասպանության հարցը գրավել է Չինաստանի գիտական և հասարակական շրջանակների ուշադրությունը:

---

38 Armenian Community Center Opens in Hong Kong, Asbarez.com, November 2013, http://asbarez.com/116212/armenian-community-center-opens-in-hong-kong/ (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին).

39 Turkey to face up to 1915 incident of Armenia in objective, fair way: FM, Xinhua, December 2011, http://en.people.cn/90777/7688762.html, Turkish parliament criticizes France over controversial Armenian resolution, Xinhua, December 2011, http://en.people.cn/90777/7683390.html, Armenians commemorate 1915 genocide, April 2012, http://news.xinhuanet.com/english/world/2012-04/24/c_131548681.htm, Armenia prepares to commemorate genocide anniversary, Xinhua, Apil 2013, http://news.xinhuanet.com/english/world/2013-04/17/c_132317418.htm, Armenians mark 99th anniversary of genocide, Xinhua, April 2014, http://news.xinhuanet.com/english/world/2014-04/24/c_126431691.htm (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

40 Տես Foreign Affairs Minister of China Yang Jiechi Paid a Tribute, The Armenian Genocide Museum Institute, 17.02.2011: http://www.genocide-museum.am/eng/news-2011.php, (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

41 Տես Anadolu Agency, China Foreign Ministry Wants Solution of Turkey-Armenia Problems Through Dialogue, March 3, 2011, Beijing : http://en.trend.az/world/turkey/1839645.html (ներբեռնվել է 2015 թ. փետրվարին):

2006 թ. ի վեր Չինաստանի կենտրոնական մամուլը սկսել է ավելի շատ ուշադրություն դարձնել Հայոց ցեղասպանության հարցի հետ կապված իրադարձությունների լուսաբանմանը հատկապես 2009 թ. ՉԺՀ և Թուրքիայի հարաբերություններում առաջացած լարվածությունից հետո: Աճել է հետաքրքրությունը Չինաստանի գիտական շրջանակներում, կատարվել են Հայոց ցեղասպանության մասին մի շարք ուշագրավ գիտական վերլուծություններ: Չինաստանում հրապարակվող գիտական աշխատություններում Հայոց ցեղասպանության հարցի հետազոտման ենթատեքստում վերլուծվում են Չինաստանի և Թուրքիայի միջև առկա խնդիրները Սինձյան-Ույղուրական ինքնավար շրջանի շուրջ:

Նախկինում Հայոց ցեղասպանության հարցը չի առնչվել ՉԺՀ կենսական շահերին, ՉԺՀ քաղաքական շրջանակները իրազեկ չեն եղել Հայոց ցեղասպանության խնդրին, կամ դա չի գրավել նրանց ուշադրությունը: Այժմ իրադրությունը փոխվել է, և կարծում ենք՝ Հայոց ցեղասպանության հարցի լուսաբանումը Չինաստանում կշարունակի աճել: Մյուս կողմից Չինաստանը կարիք ունի զարգացնելու իր հարաբերությունները Թուրքիայի նման երկրների հետ, որոնք աճելով՝ աստիճանաբար դուրս են գալիս ԱՄՆ ազդեցության տակից: Դրանց թվում են նաև Ռուսաստանը, Բրազիլիան, Հնդկաստանը, Հարավային Աֆրիկան, Իրանը և այլն: Ուստի Էրդողանի անկախ քաղաքականությունը միջազգային ասպարեզում Թուրքիան գրավիչ է դարձնում Չինաստանի համար: Չինաստանի դիվանագիտական ռազմավարությունը հաշվի է առնում նաև իրավիճակը Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջաններում:

Չնայած այն փաստին, որ Հայոց ցեղասպանության հարցը հայտնվել է չինական դիվանագիտության զինանոցում և արտացոլված է գիտական գրականության մեջ, ՉԺՀ կողմից պաշտոնական ճանաչման հարցն օրակարգում չէ տարբեր պատճառներով: Չինաստանն արտաքին քաղաքականություն ոլորտում շարունակում է հավատարիմ մնալ չմիջամտելու սկզբունքին, համենայն դեպս՝ այս պահի դրությամբ: Հարաբերությունները Թուրքիայի և Չինաստանի միջև երկուստեք մեծ կարևորություն ունեն, քանի որ երկու երկրներն էլ ջանում են օգտվել ձևավորվող բազմաբևեռ աշխարհակարգի հնարավորություններից: Այդուհանդերձ, Թուրքիայի ազգայնական քաղաքականությունը, ինչպես նաև համամարդկային արժեքների ինստիտուցիոնալիզացիայի գործընթացը Չինաստանում առաջիկայում կարող են նախադրյալներ ստեղծել Հայոց ցեղասպանության հարցում Չինաստանի առավել ակտիվ դիրքորոշման համար: Վերը նկարագրված փոփոխականներից կախված՝ ՉԺՀ դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ հնարավոր է՝ որոշ փոփոխությունների ենթարկվի:

Մնացական Ա. Սաֆարյան – գիտական հետազոտությունների բնագավառները՝ Չինաստանի արտաքին քաղաքականություն և դիվանագիտություն, ՉԺՀ հարաբերությունները Հարավային Կովկասի պետությունների հետ:

Summary

THE ARMENIAN GENOCIDE ISSUE IN CHINA'S FOREIGN POLICY OUTLOOK

Mnatsakan A.Safaryan

Key words – China's foreign policy, South Caucasus, Armenian Genocide, Armenian–Chinese relations, Chinese–Turkish relations, crimes against humanity.

The last decades have seen the growth of China's international stature and influence. As studies of China's foreign policy are thriving worldwide, many issues of China's policy in the South Caucasus remain largely unresearched. In this connection it is cognitive to detect China's approaches to the issue of the Armenian Genocide, in particular, in the view of the ongoing dynamic change in China's attitude towards such crimes against humanity as the Holocaust and the Nanjing Massacre.

The July 2009 events in Urumqi sparked a reaction of Turkey's government: Prime Minister Erdogan said that the events in Urumqi were like genocide. At the request of China's authorities Turkey's foreign ministry issued an explanatory statement, which was followed by intensive diplomacy between the two countries to ease the strained Chinese–Turkish relations. Prior to these events the issue of the Armenian Genocide has not been a matter of special academic research in China. To be precise, it received marginal coverage in China's central media sources, in those cases when the issue was brought forward by the world's prime media outlets. The issue of the Armenian Genocide in China's academic research first appears in 2010–2011 period. Moreover, China's stance on the Armenian Genocide acquired new quality. In February 2011 China's Minister of Foreign Affairs Yang Jiechi visited the Tsitsernakaberd Memorial Complex in Yerevan and paid tribute to the victims of the Armenian Genocide. In reply to Anadolu Agency's question China's Foreign Ministry made a statement, saying that China is aware of the complexities of the historical problems between Turkey and Armenia and wants it to be solved through dialogue.

China's evolving major power diplomacy has broadened its foreign policy outlook, which has brought the issue of the Armenian Genocide to the attention of China's academic and social circles. The China's diplomatic strategy is taking into account the nuances of regional situation in the South Caucasus and the neighboring areas. Despite the fact that the issue of the Armenian Genocide has gained its place in the toolbox of the Chinese diplomacy and is reflected in academic studies, the issue of the official recognition by China's government is not on the agenda due to many factors. Firstly, China still pursues the notion of non-interference to some extent, at least for the time being. Secondly, the relations between Turkey and China are considered to be of high mutual importance, as both countries make use of the developing multipolar world. Nonetheless, Turkey's nationalist policies, as well as the growing institutionalization of universal values in China may set the conditions for the recognition of the Armenian Genocide by China.

Резюме

ВОПРОС ГЕНОЦИДА АРМЯН В ОРБИТЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ КИТАЯ

Мнацакан А.Сафарян

Ключевые слова – внешняя политика Китая, Южный Кавказ, Геноцид армян, армяно–китайские отношения, китайско–турецкие отношения, преступления против человечества.

За последние десятилетия мы стали свидетелями роста международной роли и влияния Китая. В то время как исследования внешней политики Китая во всем мире достигли значительных успехов, многие вопросы политики Пекина на Южном Кавказе остаются в значительной степени не изучеными. В связи с этим вызывает интерес изучение подходов Китая к вопросу Геноцида армян, в частности, в связи с динамическими изменениями отношения этой страны к таким преступлениям против человечества, как Холокост и Нанкинская резня.

События июля 2009 года в Урумчи вызвали реакцию правительства Турции. Премьер–министр Эрдоган заявил, что события в Урумчи были похожи на геноцид. По требованию властей КНР министерство иностранных дел Турции выступило с объяснетельным заявлением, за которым последовала фаза активной дипломатии между двумя странами, чтобы облегчить напряженние создавшееся в китайско–турецких отношениях.

До этих событий вопрос Геноцида армян не являлся предметом специальных научных исследований в Китае. Он освещался центральными СМИ Китая, в тех случаях, когда попадал в центр внимания мировых СМИ. Вопрос Геноцида армян в научных исследованиях Китая впервые появляется в период 2010–2011 гг. Кроме того, в этот период позиция Китая по вопросу Геноцида армян приобретает новое качество. В феврале 2011 года министр иностранных дел КНР Ян Цзечи посетил мемориальный комплекс Цицернакаберд в Ереване и отдал дань памяти жертвам Геноцида армян. В ответ на вопрос агентства “Анадолу” с просьбой разъяснить позиию Китая, представитель МИД КНР отметил, что Китай осознает сложности исторических проблем между Турцией и Арменией и хочет, чтобы вопрос был решен путем диалога.

Дипломатия Китая как державы, расширила кругозор внешней политики, и обратила внимание научных и общественных кругов к вопросу Геноцида армян. Дипломатическая стратегия КНР учитывает нюансы региональной ситуации на Южном Кавказе и в соседних регионах.

Несмотря на то, что вопрос Геноцида армян занял свое место в арсенале китайской дипломатии и отражается в научных исследованиях, вопрос официального признания Геноцида армян пока не стоит на повестке из–за многих факторов. Во первых, в своей внешней политике Китай попрежнему предерживается политики невмешательства, по крайней мере на нынешний момент. Во вторых, отношения между Турцией и Китаем имеют важное значение для обеих сторон, так как обе страны пытаются воспользоватся условиями многополярного мира. Тем не менее, националистическая политика Турции, а также продолжающаяся институционализация общечеловеческих ценностей в Китае, могут создать предпосылки для признания Геноцида армян.